# Նախագծային աշխատանք

## Շրջադիտակի պատրաստում

Անուն-ազգանուն _____ Ամիս-ամսաթիվ _____

**1** Բացիր տուփում երկու ճեղք, ինչպես տեսնում ես նկարում: Ճեղքերը պետք է այնպիսի չափ ունենան, որ հայելիները դրանց միջով դրվեն: Ճեղքերը տուփի հակառակ կողմերում պիտի համապատասխանեն միմյանց:

**Քեզ պետք են**

ստվարաթղթե դատարկ ու հնարավորինս երկար տուփ (օր.՝ կաթի կամ հյութի)
երկու փոքր հայելի՝ տուփի լայնքի չափով
քանոն
մատիտ
սուր դանակ
կպչուն ժապավեն
մկրատ




**2** Տուփում բացիր հայելիների չափով երկու պատուհան, ինչպես տեսնում ես նկարում:

**3** Հայելիները սահեցրու ճեղքերից ներս: Հայելիների փայլուն երեսները պիտի նայեն միմյանց:

**4** Փորձի՛ր շրջադիտակդ: Ներքևի հայելու պատուհանից նե՛րս նայիր. դու պիտի որ տեսնես ավելի վերևում գտնվող ինչ-որ բան:





© Cambridge University Press 2014